



ՎԱՐԴԱՆ ՎԱԼՍՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի
ղոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱԾՆԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժամանակակից տնտեսագիտության զինավոր խնդիրը համաշխարհային տեղեկատվական հասարակության պայմաններում տեղի ունեցող փոփոխությունների մեջաբանությունն է: Այդ առումով, առանցքային են դարձնում միջազգային ինստիտուտերը, որոնք ստանձնում են նաև տնտեսության շարժիչ ուժի դերը: Դրանց գործունեության հիմքերը ծևավորվում են այն երկրներում, որտեղ տեղեկատվական հասարակությունն արդեն իսկ կայացել է: Հոգածում քննարկվում են ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառներն ու դրսնորումները տեղեկատվական հասարակության կայացման և համընդհանրացման գործընթացների զարգացման համատեքսուում:

Հիմնաբառեր. տեղեկատվական հասարակություն, համընդհանրացում, տնտեսական աճ, տնտեսական զարգացում, համաշխարհային տնտեսական ճգնաժամ, համացանց, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆինանսական հոսքեր, տեղեկատվական հոսքեր

«Տեղեկատվական հասարակություն» հասկացությունն առաջին անգամ կիրառել է Տոկիոյի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Յու. Հայաշին, ով 1969 թ. կառավարության պատվերով ուսումնաժողովում էր այն տարիներին նոր զարգացող համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա¹: Ըստ Յու. Հայաշիի հետազոտության արդյունքների՝ համակարգչայնացումը հնարավորություն է ընձեռում օգտվելու տեղեկա-

¹ Տե՛ս http://hy.wikipedia.org/wiki/%C5%82%C5%91ekeka_tvakan_ha_sararakutrojyun#cite_note-1

տվության հուսալի աղբյուրներից, ձերբագատվելու ամենօրյա տաղտկալի աշխատանքներից, ապահովելու արտադրության մեքենայացման բարձր մակարդակը: Ենթադրվում էր, որ այդ պարագայում պետք է փոխվի նաև բուն արտադրական գործընթացը. դրա արդյունքը՝ ապրանքը, պետք է դառնա «տեղեկատվության առումով ավելի ծավալուն», այսինքն՝ դրա արժեքի, զնագոյացման մեջ պետք է աճեն նորարարության, ձևավորման մարքեթինգի նաև նարարատինները:

Փաստորեն, պետք է ձևավորվեր մի նոր հասարակություն, որը ձապոնացի պրոֆեսորն անվանեց «տեղեկատվական»: Այս մոտեցումը զարգացրեց մեկ այլ ձապոնացի՝ Յո. Մասուլյան, համաձայն որի՝ հասարակության զարգացման շարժիչ ուժը լինելու է ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի ստեղծումը²:

«Տեղեկատվական հասարակության» գաղափարի տարածմանն առավելապես նպաստել են 1992-ին ԱՄՆ-ի Ազգային գիտական հիմնադրամի կոնֆերանսը և Բ. Քլինթոնի ու Ա. Գորի գեկույցները:

20-րդ դարի վերջից «տեղեկատվական հասարակություն» և «տեղեկատվայնացում» հասկացություններն ամուր դիրքեր են գրավում ոչ միայն մասնագիտական, այլև քաղաքական գործիչների, տնտեսագետների ու գիտակրթական ոլորտի գործիչների բառապաշտությունը:

Գաղափարը հիմնականում ընկալվում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացի շնորհիվ հասարակության զարգացման նոր փուլ մտնելու առումով (թեև որոշ հնացած և մակերևսային ընկալումներում սոցիալական կառուցվածքի նշված խորքային փոփոխությունը երբեմն հավասարեցվում է համացանցային ռեսուրսների պարզունակ օգտագործմանը):

Ներկայումս հասարակական-քաղաքական մտքի մեջ տեղեկատվական հասարակության գաղափարը սկսում է գրանցնել 1970-ականների «հետարյունաբերական հասարակություն» հասկացության տեղը:

2006 թ. ՄԱԿ-ի գլխավոր համաժողովը որոշում ընդունեց մայիսի 17-ը կապի և տեղեկատվական հասարակության միջազգային օր հոչակելու մասին (World Telecommunication and Information Society Day): Դա պայմանագրոված էր 1865-ի նշված օրը Միջազգային հեռագրական միության հիմնադրմամբ:

Հարկ է նկատել, որ դեռևս գոյություն չունի համընդիանուր ձանաչում գտած հատակ ձևակերպում, թե ինչ է տեղեկատվական հասարակությունը, թեև տեսաբանները համակարծիք են, որ ժամանակակից տեղեկատվական տնտեսության ձևավորման գործընթացն առավելապես կապված է տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների բուժն զարգացման և, դրանով պայմանավորված, արմատական փոփոխությունների հետ: Ըստ Է. Թոֆլերի՝ այժմ տեղի ունեցող փոփոխությունների երրորդ ալիքն է, որտեղ կերպափոխումներն այնքան արմատական են, որքան 300 տարի առաջ՝ արդյունաբերական հասարակարգին անցման ժամանակ³:

Տեղեկատվական հասարակության ձևավորումն ու զարգացումը կապված են մի շարք համաշխարհային գործընթացների հետ, որոնք խորքային

² Տես **Масуда И.**, Информационное общество как постиндустриальное общество. М.: Наука, 1991, էջ 14:

³ Տես **Тоффлер Э.**, Третья волна. М.: ООО "Фирма "Издательство" АТС", 1999, էջ 556:

ազդեցություն են ունենում համամարդկային հարաբերությունների ողջ համակարգի վրա: Ներկայիս համընդհանրական տեղեկատվական ցանցերի շնորհիվ փոխազդեցություններն առավելապես համընդգրկուն են, և գերիշխող է հորիզոնական համակարգումը: Գերտերություններն իրենց տնտեսական և քաղաքական ազդեցության սահմանները վերագծելու համար լայնորեն կիրառում են տեղեկատվական ցանցերն ու վարում յուրատեսակ տեղեկատվական պատերազմներ, ինչի հետևանքով տեղի է ունենում սոցիալ-մշակութային արժեքների բախում: Ս. Հանդիգունն իր «Քաղաքակրթությունների բախում»⁴ աշխատության մեջ շեշտադրում է այն հիմնական գաղափարը, որ այժմ տեղի է ունենում քաղաքակրթությունների բախում սոցիալական, մշակութային և տնտեսական հարաբերությունների ողջ համակարգում:

Տեխնիկայի և տեխնոլոգիաների աներևակայելի փոփոխությունները հանգեցնում են գիտելիքների ինտենսիվ աճի՝ պայմանավորելով հասկացությունների և ընթացնումների արմատական կերպափոխումները, ինչի արդյունքում մարդկային հասարակությունը որդեգրում է նոր արժեքներ և նորովի գնահատում հասարակական, այդ թվում՝ տնտեսական հարաբերությունների բնույթը: Արդյունքում կերպափոխվում են ավանդական կազմակերպական կառուցվածքները՝ հարմարվելով կապիտալի և գիտելիքների ժամանակակից գլոբալ շարժի առանձնահատկություններին և օրյեկտիվ պահանջներին: Այժմ առավել խորն ու ինտենսիվ է ընթանում աշխատանքի միջազգային բաժանումը հատկապես բարձր տեխնոլոգիաների արտադրության ոլորտում՝ ընդգրկելով տեղեկատվական ցանցերով սերտ միահյուսված համաշխարհային հասարակությանը: Դա է պատճառը, որ տեղեկատվական հասարակությունը և դրա արգասիք ցանցային տնտեսությունն ունեն համընդգրկուն բնույթ:

Պետք է նկատել, որ այս պայմաններում զարգացած տեղեկատվական հասարակությունը տիրապետում է գիտելիքի ավելի մեծ պաշարի, ինչն արդյունավետ օգտագործում է բարձր ու թանկարժեք տեխնոլոգիաներում: Մինչդեռ, ավանդական կապերով առաջնորդվող տնտեսական համակարգերը շեշտադրում են նյութական ապրանքների ու ծառայությունների արտադրությունը՝ վերածվելով տեխնիկա և տեխնոլոգիա ներմուծող երկրների: Միջազգային առևտորի ծավալների և հնարավորությունների ընդլայնման արդյունքում զարգացած երկրներն ապահովում են ռեսուրսախնայող տնտեսական աճ՝ շնորհիվ նյութական ապրանքների և ծառայությունների հետ առարկայացած գիտելիքների փոխանակման: Այժմ ավելի է սրվում որակյալ տեղեկատվության անհամաշափ բաշխման խնդիրը՝ զարգացած երկրների համար դառնալով ազգային տնտեսության մրցունակության բարձրացման վճռորոշ գործոն:

Այսպիսով՝ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների բնագավառի շարունակական աճը նպաստում է համաշխարհային մասշտաբով տեղեկատվության անհամաշափության մեծացմանը՝ միաժամանակ ապահովելով դինամիկ ռեսուրսախնայող տնտեսական աճ՝ զարգացող, թե՛ զարգացած երկրներում: Սակայն համաշխարհային տնտեսության մեջ շուկայական մեխանիզմն առաջնորդվում է «հասարակական կարկանդակի» ֆունկցիոնալ բաշխման սկզբունքով՝ խորացնելով զարգացած և զարգացող երկրներում սոցիալական և տնտեսական անհավասարությունը: Սա,

⁴Տես Խանտինգտոն Ը., Столкновение цивилизаций. М.: ACT, 2007, 576 էջ:

իր հերթին, հանգեցնում է զարգացող երկրներում կրթությանն ու գիտությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշռի նվազմանը՝ ել ավելի խորացնելով տեղեկատվության անհամաչափությունը: Փաստորեն, համաշխարհային մակարդակով Եկանուտների վերաբաշխման հստակ ու կանոնակարգված քաղաքականության բացակայությունն ուղեկցվում է անհավասարության շարունակական խորացմանը:

Այդուհանդերձ, յուրաքանչյուր դարաշրջան ունի զարգացման իր առանձնահատկությունները, որոնք տնտեսական վերելքների և անկումների հիմքն են կազմում: Տեղեկատվական հասարակության շրջանակներում աստիճանաբար ավելի ու ավելի ակնհայտ են դրսնորվում շուկայական տնտեսության ժամանակակից ներքին հակասությունները:

1. Սրվում է հակասությունը ժողովրդավարության և ժամանակակից կապիտալիզմի միջև: Տեղեկատվական ցանցերը, լինելով առավելապես ինքնակարգավորվող համակարգեր, կատարյալ դաշտ են խոսքի ազատության համար: Որոշ դեպքերում խոսքի ազատությունը վերածվում է քառսի: Սակայն դա ժողովրդավարության իմնական բնութագրիներից է և բխում է ժողովրդավար հասարակության կյացման նպատակից: Այսպիսով՝ տեղեկատվական հասարակությունը գերծ է մտքերի արտահայտման սահմանափակումներից և առավելագույնս համապատասխանում է ժողովրդավարության պահանջներին: Մյուս կողմից՝ թվում է, թե ժողովրդավարությունը կապիտալիզմի զարգացման իմնական նպատակն է, սակայն իրականում ժողովրդավարությունը խարիսում է կապիտալիզմի հիմքերը: Պատճառն այն է, որ կապիտալիզմը պահանջում է ցանկացած պահի գործել՝ «վաղվա օրվա» մասին մտածելով, մինչեւ ժողովրդավարությունը նախապայմաններ է ստեղծում ստորադասելու այդ սկզբունքը: Սրա ցայտուն դրսնորումներից են աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում պարբերաբար կրկնվող գործադրությունները, որոնք ուղեկցվում են զանգվածային անկարգություններով: Կապիտալիզմը պահանջում է այսօր աշխատել շատ ու ծախսել քիչ՝ հօգուտ վաղվա բարեկեցիկ կյանքի, մինչեւ ժողովրդավարությունը հնարավորություն է տալիս աշխատավորներին պայքարելու այսօրվա նպատակների համար, իսկ կառավարությունները ստիպված են տեղի տալ, քանի որ, վերջին հաշվով, վերընտրվելու խնդիր ունեն:

2. Ավելի ցայտուն է դրսնորվում անհավասարության հիմնախնդիրը: Ընդ որում, սա պետք է դիտարկել ոչ միայն ըստ առանձին պետության, այլև համաշխարհային մասշտաբով, քանի որ այսօր առավել ակնառու են երկրների զարգացման մակարդակների տարբերությունները: Այս երևոյթը դրսնորում է խորացման միտուն: Պատճառն այն է, որ ռեսուրսները, այդ թվում նաև բարձրակարգ աշխատուժը, զարգացող երկրներից հոսում են դեպի զարգացած երկրներ՝ զարգելով թույլ զարգացած երկրների տնտեսական զարգացումը: Կարելի է նկատել, որ դեռևս Կ. Մարքսի կողմից մատնանշված կապիտալիզմի ներքին հակասությունը ստանում է ժամանակակից դրսնորում, այսինքն՝ արտադրությունն ունի համընդգրկուն բնույթ, մինչեւ սպառնան գերակշռող մասը բաժին է ընկնում զարգացած երկրներին: Մյուս կողմից՝ աշխարհի գրեթե բոլոր երկրներում սրվում է հասարակության անդամների սոցիալական անհավասարության խնդիրը՝ պատճառ դաշնալով թերսպարման տեսության դրույթների դրսնորման:

3. Առավել ընդգծվում է ռեսուրսների սահմանափակության հիմնախնդիրը: Սա ակնառու է հատկապես էներգետիկ ռեսուրսների առումով, որի խոսուն վկայությունը նավթով և գազով հարուստ մի շարք երկրներում պատերազմական գործողություններն են՝ գերտերությունների շահերի հաստատման իրական նպատակով: Ռեսուրսների սահմանափակության խնդրի լուծումը պահանջում է կառուցվածքային փոփոխություններ տնտեսության տեխնոլոգիական բնագավառում: Այսինքն՝ պետք է կիրառվեն այնպիսի տեխնիկա ու տեխնոլոգիա, սպառման կառուցվածքն այնպես պետք է փոփոխվի, որ մեղմվի ռեսուրսների սահմանափակության հիմնախնդիրը: Սրա լուծնանուղին արդեն իսկ նախանշվում է. անցում կատարել տեղեկատվական հասարակության, որտեղ աշխատողների գերակշիռ մասը գրաղված է ՏՀՏ ոլորտում, իսկ գլխավոր ռեսուրսը տեղեկատվությունն է:

4. Համընդիանրացման բարձր մակարդակի հետևանքով զարգացած երկրներում տեղի ունեցող փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում համաշխարհային տնտեսության վրա: Զեավորված տնտեսական միավորումները հարաբերականորեն նվազեցնում են առանձին տնտեսական միավորների (ըստ ազգային տնտեսական համակարգերի՝ պետության տնտեսական քաղաքականության ձկունության աստիճանը):

Վերը նշված հակասությունները, միահյուսվելով համընդիանրացման բացասական հետևանքներին, պայմանավորում են ժամանակակից տնտեսական ձգնաժամների համակարգային բնույթը ու ուժգնությունը: Թեև ժամանակակից տնտեսությունը բնութագրվում է գիտելիքահենքությամբ, տեխնոլոգիական հագեցվածության բարձր մակարդակով, ռեսուրսախնայող ինտենսիվ տնտեսական աճ ապահովելու ներուժով, այդուհանդերձ, ուղեկցվում է սոցիալական և տնտեսական անկայունության համընդիանրական ռիսկերով: Այս եզրակացության հիմնավորումները բխում են 2007–2009 թթ. ֆինանսատնտեսական ձգնաժամի բնույթից և զարգացման մեխանիզմի առանձնահատկություններից: Թեև համաշխարհայնացման ներկայիս տեմպերի պայմաններում առաջնահերթ են համարվում այնպիսի համանարդկային խնդիրներ, ինչպիսիք են ժողովրդավարությունը, խաղաղությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, ահարեկչության դեմ պայքարը, էկոլոգիան, աղքատությունը և այլն, այնուամենայնիվ, հատկապես վերջին ֆինանսատնտեսական ձգնաժամը հիմք տվեց արտահայտելու այն տեսակետը, որ միջազգային ֆինանսական հոսքերի կառավարումն ու տնտեսական ենթակառուցվածքների կենսագործունեության պայմանների ապահովումը նույնպես համաշխարհային խնդիրներ են⁵:

Պատճառն այն է, որ ֆինանսական հոսքերի կամ միջազգային տնտեսական հարաբերությունների բնականուն ընթացքի խափանումը հանգեցնում է համաշխարհային տնտեսության կայունության խախտման՝ բացասարար անդրադարձնալով ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական իրավիճակի վրա: Համընդիանուր սերտ կապերը պայմանավորում են առանձին տնտեսական համակարգերում տեղի ունեցող ցնցումների տարածումը համաշխարհային տնտեսության մնացյալ բաղադրիչների վրա:

Երկրորդ հազարամյակի առաջին տասնամյակն ավարտվեց խոշոր տնտեսական ձգնաժամով, որը խարիսկեց համաշխարհային տնտեսության հիմքերը՝ ևս մեկ անգամ վեր հանելով շուկայական տնտեսության կամ ժա-

⁵ Տես Կյուտարև Ա., Վլաստելինы мировых колец. М.: Новое время. 2002, № 4, էջ 27:

մանակակից կապիտալիզմի ներքին հակասությունները: Ավելին, տնտեսական պարբերաշրջանների պատմության ուսումնափրությունը վկայում է, որ տնտեսական ճգնաժամերը խիստ տարբեր են. հիմքում ունեն գործոնների սկզբունքորեն այլ խումբ և ներազդման ինտենսիվություն: Սակայն ընդհանրական այն է, որ ժամանակի ցանկացած պահի դրանք կուտակվում են՝ վերածվելով միանական «քայլայիշ համակարգի» և հանգեցնում միանման տնտեսական հետևանքների՝ բնորոշ թե՛ վերելքի, թե՛ անկնան փուլերին:

Այդպիսին էր նաև վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի գարգացման ու տարածման մեխանիզմը: Դրա հիմքերը ձևավորվել են 1990-ական թվականների ընթացքում, և միայն 2006–2007 թթ. նկատելի դարձան իրական տնտեսական սպառնալիքները:

Այսպես՝ ԱՄՆ-ի տնտեսությունը համաշխարհային տնտեսության հիմնական բաղադրիչներից է, առանցքային հենասյուններից, որը բազմաբնույթ կապերով միահյուսված է այլ տնտեսական համակարգերի հետ: Այս հանգամանքը, լինելով համաշխարհայնացման անմիջական հետևանքը, իր ուղղակի ազդեցությունն ունեցավ համապատասխան տնտեսական գործընթացների վրա՝ դրւու գալով ԱՄՆ-ի հիպոթեքային ու անշարժ գույքի շուկաների սահմաններից: Այն սկսեց ծավալվել ու «ձնագնդի էֆեկտով» տարածվել այլ երկրների ֆինանսական հնատիտուտների վրա՝ ազդարարելով ֆինանսական ճգնաժամի սկզբը:

Գնահատելով գլոբալացման ազդեցությունը սոցիալ-տնտեսական գործընթացների վրա՝ հետազոտողները դա ներկայացնում են թե՛ որպես հնարավորություն, թե՛ որպես սպառնալիք: Ավելին, շեշտվում է այն տեսակետը, որ գարգացող և անցումային տնտեսություններում տեղի են ունենում սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների վերասուրողորոշում և տնտեսության կառուցվածքային հիմքերի վերափոխում՝ ներազդված միջազգային տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններով⁶: Որպես հետևանք՝ գարգացող և անցումային տնտեսությամբ երկրները բախվում են էական դժվարությունների ինքնուրույն տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ: Այս երևույթը ավելի ու ավելի ցայտուն է արտահայտվում համընդհանրացման ընդլայնմանը գուգընթաց: Զարգացած երկրները, թելադրելով գիտատեխնիկական առաջընթացի բնույթը ու արդյունաբերական քաղաքականության առաջնահերթությունները, կարող են նշանակալի ազդեցություն ունենալ արտաքին տնտեսական գործընթացների վրա՝ ձեռք բերելով տնտեսական քաղաքականությունների սահմանման յուրատեսակ գերիշխող դիրք:

Միջազգային տնտեսական հարաբերությունների այսպիսի համակարգվածությունը հնարավորություն է տալիս մի կողմից՝ խորացնելու աշխատանքի միջազգային բաժանումն ու մասնագիտացման մակարդակը, իսկ մյուս կողմից՝ ապրանքային, ծառայությունների, տեղեկատվության, տեխնոլոգիաների և ֆինանսական միջոցների հոսքերի խափանումները որևէ օղակում ուղղակի ազդեցություն են ունենում ողջ համաշխարհային տնտեսության վրա:

Այսպիսով՝ համընդհանրացման պայմաններում նվազում է առանձին տնտեսական համակարգերի ինքնուրույնության աստիճանը, ինչի հետևանքով ցանկացած խափանում որևէ օղակում ազդակատարածական մեխա-

⁶ Տե՛ս Կոլլոնտայ Բ., Էվոլյուցիա զարգացման համակարգությունը. Մ.: ՄЭиМО, 2002, №1, էջ 25:

նիզմների միջոցով ընդգրկում է համաշխարհային տնտեսության ավելի մեծ հատված:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ համընդիանրացումը, որը տեղեկատվական հասարակության զարգացման հիմնական ուղենիշներից է, նպաստում է համաշխարհային տնտեսության անկայունության խորացնան ու ընդգրկման շրջանակների ընդլայնմանը հետևալ բնութագրիչների պատճառով.

1. Ազգային տնտեսությունների միջև տնտեսական կապերի և փոխհարթերությունների խորացումը մի կողմից՝ նվազեցնում է ինքնուրույն տնտեսական քաղաքականություն մշակելու և իրականացնելու հնարավորությունները, մյուս կողմից՝ պայմաններ է ստեղծում տնտեսական ցնցումների տարածման համար:

2. Միջազգային տնտեսական հարաբերությունների խորացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում համաշխարհային ֆինանսական շուկայի զարգացման համար: Սա պայմանավորում է ֆինանսական հոսքերի կուտակումն առանձին կենտրոններում՝ լայն դաշտ ապահովելով ֆինանսական մեքենայությունների համար: Euromoney-ի տվյալների համաձայն՝ համաշխարհային ֆոնդային շուկաների կապիտալացման կեսից ավելին բաժին է ընկնում Լոնդոնին, Նյու Յորքին և Տոկիօյին⁷: Ավելին, հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ երեք խոշորագույն ֆինանսական կենտրոններուն իրականացվող յուրաքանչյուր 5 գործարքից 4-ում իրենց անմիջական մասնակցությունն են ունենում ամերիկյան 3 խոշորագույն կոնգլոմերատներ՝ Մորգան Ստենլին, Մերիլ Լինչը և Հոլդմեն Սակսը⁸: Այս պայմաններում ֆինանսական շուկաները վերածվում են յուրատեսակ վերազգային ինստիտուտների, որոնց գործունեության նկատմամբ հնարավոր չէ ապահովել պետական վերահսկողության անհրաժեշտ մակարդակ: Սա է վերջին տասնամյակների ընթացքում տնտեսության իրական հատվածում տեղի ունեցող անկումների՝ ֆինանսական շուկայի անկայունություններից ածանցման հիմնական պատճառներից մեկը:

3. Միջազգային սուր մրցակցությունը, որն ուղեկցվում է կապիտալ ընդունող երկրների հումքային բազայի ինտենսիվ օգտագործմամբ և տնտեսական ներուժի նվազմամբ: Այժմ զարգացած երկրները վերածվել են յուրատեսակ մենաշնորհյաների, որոնք թելադրում են փոքր տնտեսությամբ երկրների տնտեսական զարգացման ուղղությունները: Միաժամանակ, տիրապետելով զգալի ֆինանսական կարողությունների և վարելով ուղեների ներհոսքի քաղաքականություն, խթանում են գիտատեխնիկական առաջընթացն ու մրցակցային առավելություն ստանում համաշխարհային շուկայում:

4. Համընդիանրացման ներքին տրամաբանությունից բխող և համաշխարհային տնտեսական ցնցումների համար հող նախապատրաստող մեկ այլ հանգամանք է միջազգային տնտեսական և քաղաքական հարաբերությունների համապատասխանեցման անհրաժեշտությունը: Այսպես՝ համաշխարհային տնտեսությունը ձգտում է միատարրության, ինչը ենթադրում է հնարավորինս մոտ ինստիտուտների առկայություն: Այս պայմաններում

⁷ Տե՛ս Международные валютно-денежные рынки и кредитно-финансовые институты // Международные экономические отношения. Уч. / под общ. ред. Рыбалкина В. Е. - М.: Внешнеэкономический библиотека, Дипломатическая академия при МИД РФ, 1997, էջ 232-233.

⁸ Տե՛ս Կոլլոնտաй В. , նշվ. աշխ.:

տարբեր արժեքային հատկանիշներով առանձնացող ազգերը զարգացած երկրների անմիջական ազդեցության հետևանքով պարտադրված են փոխելու արժեհամակարգն ու տնտեսական հարաբերությունների կառուցման սկզբունքները: Որոշ երկրներում սա տեղի է ունենում աստիճանաբար՝ առանց սոցիալ-քաղաքական ցնցումների, մինչդեռ քիչ չեն դեպքերը, երբ այդ արժեքները պարտադրվում են հեղափոխությունների և պատերազմների միջոցով: Ընդ որում, անվիճելի է զարգացած երկրների կողմից կիրառվող երկակի չափորոշիչների առկայությունը և իրական տնտեսական նպատակները այլ պատրիվակներով քողարկելու գործընթացը: Հատկապես էներգետիկ ռեսուրսներով հարուստ տարածաշրջաններում պատերազմների հրահրումը և անմիջական մասնակցությունը կապված են նշանակալի ծախսերի հետ, և կասկածից վեր է դրանց բացասական ազդեցությունն ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ քաղաքակրթության առումով:

Այսպիսով՝ համընդիմանրացումը, ընձեռելով տնտեսական զարգացման մեջ հնարավորություններ, նիհաժմանակ տնտեսական անկայունությունների նախապայման ռիսկերի աղքուր է: Դրա հակասական բնույթը, մեր կարծիքով, կարելի է պարփակել այն դատողությամբ, որ, մի կողմից՝ պահանջվում է միասնական տեղեկատվական ֆինանսական տիրույթի առկայություն, որն անհրաժեշտ է միջազգային առևտորի, աշխատանքի բաժանման ու մասնագիտացման և համաշխարհային տնտեսության զարգացման համար, իսկ մյուս կողմից՝ ազգային և համաշխարհային տնտեսությունները կառուցվում են փիլիուն հիմքերի վրա, ինչն արտահայտվում է գիտատեխնիկական զարգացման և սոցիալական անհավասարությամբ, զարգացած երկրների մոնուպու կարգավիճակով թե՝ տնտեսական, թե՝ քաղաքական գործընթացներում, վերազգային կորպորացիաների տնտեսական դերի բարձրացմամբ, ինչը նվազեցնում է առանձին պետությունների կողմից տնտեսության կարգավորման հնարավորությունները, ֆինանսական հատվածի ինքնավարության նակարդակի բարձրացմամբ, վիրտուալ տնտեսության ձևավորմամբ և զարգացմամբ, ինչն իր գործողության սկզբունքներով և մեխանիզմներով էապես տարբերվում է ավանդական տնտեսական հարաբերություններից:

ВАРДАН ВЛАСЯН

Доцент кафедры „ Экономической теории ” АГЭУ,
кандидат экономических наук

Информационное общество и современные проблемы развития мировой экономики.- Актуальность темы исследования обусловлена потребностью современной экономической науки понимания глубинных изменений, происходящих в сфере занятости населения в условиях становления и функционирования глобальной информационной экономики. В мировом масштабе в экономике информационного общества традиционную экономическую составляющую заменяют международные институты, которые ее поддерживают. Основу для деятельности этих институтов создают страны, которые достигли прогресса в формировании информационного общества и опираются на сильные национальные экономики. В статье анализируются причины и проявления мирового финансового кризиса в контексте становления информационного общества и углубления глобализационных процессов.

VARDAN VLASYAN

Associate - Professor at the Chair of
„ Theory of Economics ” at ASUE, PhD in Economics

Information Society and Current Issues of World Economy.- Relevance of the research topic is due to the need of modern economic science for the understanding of underlying changes in the field of employment under the conditions of formation and functioning of the global information economy. In the economy of information society, the traditional economic component replaces the international institutions that support it. Foundations for the activities of these institutions are created by the countries that have made progress in the Information Society and are based on strong national economies. This article analyzes the causes and manifestations of the global financial crisis in the context of information society and deepening of globalization processes.